

Սույն փաստաթղթով սահմանվում է <<Չարենցավանի պետական քոլեջ>> ՊՈԱԿ-ում (այսուհետ՝ քոլեջ) վարչական անձնակազմի կողմից ուսանողներին հավելյալ օժանդակում և ուղղորդում տրամադրելու կանոնակարգը:

Ուսանողներին հավելյալ օժանդակումը և ուղղորդումը քոլեջի վարչական անձնակազմի հիմնական գործառույթներից է:

Վարչական անձնակազմի կողմից ուսանողների օժանդակումը և ուղղորդումը վերաբերում է կրթական գործընթացին, ուսանողական կյանքին և մասնավորապես ուղղված է՝

- ուսանողներին՝ ուսումնական գործընթացում աջակցությանը,
- ուսանողներին՝ արտալսարանային միջոցառումներին մասնակցության աջակցությանը:

Սույն կանոնակարգը հաստատվում և նրանում փոփոխությունները կատարվում են քոլեջի կոլեգիալ կառավարման խորհրդի կողմից:

Ուսանողներին հավելյալ օժանդակման և ուղղորդման նպատակը, խնդիրները և կազմակերպումը

1. Վարչական կազմի կողմից ուսանողներին հավելյալ օժանդակման և ուղղորդման հիմնական նպատակն է կրթական բարենպաստ միջավայրի ստեղծումը, ուսանողների զարգացման, ինքնաիրացման և քոլեջի միջավայրին ինտեգրմանը նպաստող գործընթացներում աջակցության տրամադրումը:

2. Վարչական կազմի կողմից ուսանողներին հավելյալ օժանդակման և ուղղորդման խնդիրներն են՝

- ուսանողների կրթական և անձնային կարիքների բացահայտում և ուղղորդում,
- ուսանողների սոցիալական խնդիրների բացահայտում և օժանդակում,
- ուսանողների արտալսարանային կյանքի կազմակերպում և օժանդակում,

Կատարվող աշխատանքները հիմնականում ուղղված են՝

- ուսանողների կրթական կարիքների վերհանմանն ու լուծմանը,

- ուսանողների անձնային կարիքի ուսումնասիրմանը և ուսանողական կյանքի բարելավմանը,
- ուսանողների սոցիալական պաշտպանության կազմակերպմանն ու ապահովմանը (փոխհատուցման տրամադրման համար անհրաժեշտ տեղեկանքների հավաքագրում),
- ուսանողների արտալսարանային կյանքին աջակցությանը,
- ուսանողական կյանքում ակտիվ մասնակցություն ունեցող ուսանողների խրախուսմանը,
- ցածր կուրսերի ուսանողների՝ քոլեջի միջավայրին հարմարվելու աշխատանքների կազմակերպմանը,
- ուսանողության շրջանում անհրաժեշտ տեղեկատվության ապահովմանը:

3. Ուսանողները լրացուցիչ օժանդակության և ուղղորդման համար կարող են դիմել՝

- քոլեջի տնօրենին այն հարցերով, որոնք լուծում չեն ստացել այլ օղակներում,
- ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալին՝ իր իրավասության շրջանակին առնչվող հարցերով,
- կազմակերպադաստիարակչական աշխատանքների գծով տնօրենի տեղակալին՝ իր իրավասության շրջանակին առնչվող հարցերով:

Ուսանողները իրենց հարցերը կարող են բարձրացնել նաև ուսանողական խորհրդի միջոցով: Եթե հարցի լուծումը համապատասխան աշխատակցի իրավասություններից դուրս է, ապա նա պարտավոր է հարցի քննարկումը տեղափոխել ավելի բարձր մարմին: